

# ՍԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԱՅՑՈՎ ԵՂԵԼ ԵՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ

11.10.2024 15:37



2024թ. հոկտեմբերի 10-ին ՀՀ փաստաբանների պալատը հյուրընկալել է Սևանի թիվ 6 միջնակարգ դպրոցի աշակերտներին և ուսուցիչներին:


Հյուրընկալված աշակերտների համար օրը լի էր հետաքրքիր հանդիպումներով և քննարկումներով:


Աշակերտներին բովանդակային օր ապահովելու համար նրանց հետ հանդիպել և զրուցել են ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը, Փաստաբանական ակադեմիայի ռեկտոր Արա Զոհրաբյանը, պրոռեկտոր Մանե Կարապետյանը, Փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավար Լուսինե Սարգսյանը և Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար Գևորգ Մկրտչյանը:

Փաստաբանների պալատի և Փաստաբանական ակադեմիայի ներկայացուցիչները, բազմաթիվ խորհուրդների հետ մեկտեղ, աշակերտներին հորդորել են լավ սովորել, որովհետև յուրաքանչյուր հաջողության հիմքում լավ կրթությունն է: Հայրենիքին արժանի մարդ, պետությանն արժանի քաղաքացի լինելու հիմքում դարձյալ լավ կրթությունն է, գիտելիքն ու հայրենասիրությունը:

Հենց այս դպրոցի շրջանավարտ է եղել նաև Արցախյան 44-օրյա պատերազմում անմահացած Լևոն Լևոնյանը՝ փաստաբան Կարեն Լևոնյանի որդին, և դպրոցի դասասենյակներից մեկն անվանակոչված է նրա անունով:

Հանդիպման ընթացքում աշակերտները նաև շրջել են Փաստաբանների պալատի վարչական շենքի տարածքում, եղել Հանրային պաշտպանի գրասենյակում, Փաստաբանական ակադեմիայում և անմիջականորեն ծանոթացել աշխատանքային պայմաններին և գործընթացներին:









```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```